համարելով այն այդ հոսանքի ամենաբարձր նվաճումներից մեկը՝ այդ կապակցությամբ մեկ անգամ ևս շեշտելով գավառական շարժման նշանակությունը ազգի հոգևոր վերածննդի հեռանկարների մեջ: Բայց նրա հայացքը Զարդարյանի ստեղծագործության վերաբերմամբ զգալիորեն տարբերվում է Զ. Եսայանի ընդգծված գեղապաշտությունից: Եթե վերջինս նախընտրում էր Զարդարյանի հեքիաթներն ու արձակ բանաստեղծությունները, ապա իրապաշտ Երուխանին առավելապես հետաքրքրում են գավառական կյանքի ու բարքերի պատկերները: Վերլուծելով «Պուտ մը ջուր», «Տան սերը», «Շուն մըն ալ պակաս», «Սև հավը կանչեց» և մի քանի այլ պատմվածքներ՝ բանախոսը եզրակացնում է, թե՝ «գրական ոչ մեկ դպրոցի վրա կը կաղապարե ինքզինքը, ...վիպական ոչ մեկ ուղղութենե ազդված է որոշակի», բայց անմիջապես էլ ավելացնում է, թե «Զարդարյան կը մնա, Թլկատինցիեն անմիջապես ետք, գավառի նորագույն նորավիպագիրը, և իբր այն կը պատկանի, թերևս առանց ուզելու, իրապաշտ դպրոցին»: Բանախոսը հայ գրողին համեմատում է նույնիսկ Զոլայի հետ, թեև գտնում է, որ նրանը «առանձնահատուկ իրապաշտություն մըն է»:

Որ Զարդարյանի պատմվածքներում կան որոշակի իրապաշտական շեշտեր, անկասկած է: Խնդիրն այն է, սակայն, որ նա 20-րդ դարի սկզբի գեղապաշտ շարժման նշանավոր ներկայացուցիչներից մեկն է դառնում ոչ թե այդ շերտերով, այլ հենց այն հատկանիշներով, որոնց մասին Երուխանը խոսում է գրողի արձակ բանաստեղծությունների կապակցությամբ և որոնք դիտում է որպես նրա իրապաշտ նկարագրի օժանդակ գծեր:

***

Ասուլիսների շարքում իրենց բովանդակությամբ ու հարցադրումների հարստությամբ առանձնանում են հատկապես Վարուժանի «Հեթանոս երգերին» և Սիամանթոյի «Ամբողջական գործին» նվիրվածները: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ 20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծական շարժման բոլոր ուժեղ ու թույլ կողմերն ամենից ավելի ցայտուն երևան են գալիս այս երկու բանաստեղծների ստեղծագործության մեջ:

Վարուժանին նվիրված ասուլիսը միայն անվանականորեն էր վերաբերում բանաստեղծի վերջին գրքին. այն ըստ էության